

## ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԿՈՒՐԴ

25 Մայիսին, Դիմադրության և ազատագրության տոնին առիթով, եւ 27-29 Մայիսին, Ատհայի տոնին առիթով, Լիբանանի մամլոյ եւ խմբագիրներու սենտիքները յայտարարած են մամլոյ արձակուրդի օրեր:

Ուստի, «Արարատ» լոյս պիտի չտեսնէ իր հերթական թիւերով՝ Երեքշաբթի, Զինգշաբթի եւ Շաբաթ օրերուն:

**Յետեւաբար, եւ բացառաբար, մեր յաջորդ թիւը պիտի ըլլայ Զորեքշաբթի, 27 Մայիսին:**

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ 9 ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

Միացեալ Նահանգներու Ելեմուտքի նախարարութիւնը պատժամիջոցներ սահմանեց 9 լիբանանցիներու նկատմամբ՝ խաղաղութեան հոլովոյթը եւ Զրգպալլայի ապագիւնումը խափանելու ամբաստանութեամբ: Պատժամիջոցներու ենթարկուած են Զրգպալլայի «Հաւատարմութիւն Դիմադրութեան» խմբակցութեան անդամ երեսփոխաններ Մոհամատ Ֆնէյշ, Հասան Ֆատալլա, Իպրահիմ Էլ-Մուսաուի, Զըսէյն Հաժ Հասան, ինչպէս նաեւ Պէյրութի մէջ Իրանի նորանշանակ դեսպան Մոհամատ Ռիտա Շիպանի եւ Ամալ շարժումի ապահովական պատասխանատուներէն Ահմատ Պաւլապի ու Ալի Սաֆաուի՝ Զրգպալլային օգնելու եւ Իսրայէլի դէմ գործողութիւններ համակարգելու յանցանքով: Այն ինչ կը վերաբերի պետական պաշտօնէաներու, ապա Ընդհանուր անվտանգութեան ծառայութենէն զօրավար

առթիւ օրուան հրահանգը ուղղեց զինուորականներուն, որուն մէջ մեծաբեց հայրենիքին համար նահատակուած զինուորներուն յիշատակը եւ վերահաստատեց, որ այս օրհասական օրերուն, բանակը կը կանգնի լիբանանցիներուն կողքին՝ թէթեւցնելու համար իսրայէլեան յարձակումներուն հետեւանքները եւ աջակցելու իրենց տուներէն տեղահանուած քաղաքացիներուն: «Մեր պատգամը յստակ է. բանակը պիտի կանխէ բոլոր դաւադրութիւնները, որոնք կը միտին ցնցելու Լիբանանի ներքին կայունութիւնն ու ապահովութիւնը, պահպանելով լիբանանցիներուն ազգային միասնականութիւնը», ըսաւ Հայքալ:

### ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆԻ ՄԱՐԹԱՆԵՐ

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուի գլխաւորութեամբ կառավարութիւնը երէկ Պապատայի պալատին մէջ գումարեց իր հերթական նիստը, որուն ընթացքին Աուի մարտեց, որ Լիբանան վերատիրանայ կայունութեան եւ



խաթար Նասիրըտտին եւ բանակէն զնդապետ Սամըր Համատա պատժամիջոցներու ենթարկուեցան Զրգպալլայի հետախուզական տեղեկութիւններ փոխանցելու յանցանքով: Ներքին գործերու նախարար Ահմատ Հաժար յայտնեց, որ Ընդհանուր անվտանգութեան ընդհանուր տնօրէնէն պահանջած է հետաքննութիւն բանալ այս հաստատութեան մէջ հնարաւոր բոլոր խախտումներուն վերաբերեալ: Լիբանանեան բանակը եւ Ընդհանուր անվտանգութեան ծառայութիւնը հաղորդագրութիւններով հակադարձեցին ամերիկեան պատժամիջոցներուն ու շէտեցին, թէ բոլոր սպանները իրենց պարտականութիւնը կը կատարեն կարգապահութեամբ եւ արհեստավարժութեամբ, միշտ յանձնառու մնալով Լիբանանի շահերուն: Իսկ Զրգպալլա հաղորդագրութեամբ մը տեղի ունեցածը համարեց անարեւելի, մերժելով տեղի տալ ամերիկեան պահանջներուն:

### ՀԱՅԶԱԼ. «ԲԱՆԱԿԸ ՊԻՏԻ ՊԱՅՊԱՆԵ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Լիբանանեան բանակի հրամանատար զօրավար Ռուտոֆ Հայքալ Դիմադրութեան եւ ազատագրութեան տոնին



վերջնականապէս ազատագրուի բռնագրաւեալ բոլոր հողերը: Տեղեկատուութեան նախարար Փոլ Մարքոս յայտնեց, որ նախարարները նշանակած են Զինսիսի, Լեռնալիբանանի, Պէյրութի, Պեքաայի եւ Հարաւի մէջ ջուրի հաստատութեան վարչական խորհուրդներուն անդամները:

### ՀԱՐԱՄԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

Մինչ տակաւին ընդհանուր առմամբ կը գործադրուի Պէյրութն ու հարաւային արուարձանները իսրայէլեան օդային հարուածներէն զերծ պահելու փոխըմբռնումը, որեւէ ձեռով զինադադար չկայ հարաւի մէջ, ուր կը շարունակուին իսրայէլեան հարուածները: Առողջապահութեան նախարարութիւնը երէկ երեկոյան յայտարարեց, թէ իսրայէլեան թիրախաւորումներուն հետեւանքով մահացած մարդոց թիւը բարձրացած է 3111-ի, իսկ վիրաւորներուն ընդհանուր թիւը՝ 9432-ի:

## ԻՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ՆԱՍԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՆԱԿԱՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Միացեալ Նահանգներու եւ Թեհրանի միջեւ խաղաղութեան համաձայնագրին նախագիծը կը ներառէ Իրանի նկատմամբ սահմանուած բոլոր պատժամիջոցներու աստիճանական չեղարկում, պայմանաւ որ Իրան գործադրէ փաստաթուղթին բոլոր պայմանները: Միացեալ Նահանգներու նախագահն ու փոխնախագահը տակաւին երկու օր առաջ յայտնած էին, թէ շատ մօտեցած են զինադադարի համաձայնագրի ստորագրումին: Անոնք շէտեցած էին նաեւ,



որ Թեհրան պետք չէ գումար գանձէ Հորմուզի նեղուցէն անցնող նաւերէն: Չինադադարի ենթադրեալ համաձայնագրին մէջ պիտի նշուի, թէ պատերազմը կը դադարի ոչ միայն Իրանի մէջ, այլեւ Իրանին հետ առնչուած բոլոր ճակատներուն վրայ: Ամերիկացի արտաքին գործերու նախարար Մարքո Ռուսիո յայտնեց, թէ որոշ դրական յառաջընթաց կայ Իրանի հետ բանակցութիւններուն մէջ, իսկ Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ բանակցային նիստերուն ընթացքին Թեհրանի ներկայացուցիչները յանձնառու կը մնան Իրանի իրաւունքներուն, իսկ ամերիկեան կողմը կը պահանջէ հրաժարիլ անոնցմէ: Արաբական Միացեալ Էմիրութիւններու նախագահի խորհրդական Անուար Կարկաշ իր կարգին կարծիք

Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ՓԱՇԻՆԵԱՆ ԿԸ ԺԽՏԵ ՀՈՂ ՅԱՆՁՆԵԼՈՒ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ համաձայնագրային Google Maps հարթակին վրայ Հայաստանի մէջ գտնուող Տիգրանաշէնին անունը երբեք չէ փոխուած եւ կը կրէ ատրպէյճանական անուն մը, մինչ կարգ մը մարդիկ այդ իրականութիւնը տակաւին նոր նկատած են ու կ'ամբաստանեն կառավարութիւնը: Սուտ համարելով այն պնդումը, թէ ինչ հող կը յանձնէ Ատրպէյճանին, վարչապետը նշեց, որ «Հայաստանն ու Ատրպէյճանը փոխադարձաբար ճանչցած են իրար տարածքային ամբողջականութիւնը եւ այդ հիման վրայ կատարած են սահմանազատում: Այս կը նշանակէ, որ Հայաստանն ու Ատրպէյճանը կը համապատասխանեն Խորհրդային Հայաստանի եւ Ատրպէյճանի հանրապետութիւններուն»: Վարչապետին համաձայն, ակնյայտ է, որ սահմանազատման բերումով Հայաստանի տարածքը պիտի կազմէ 29.743 քառակուսի քիլոմետր, իսկ ճանապարհներուն ու ենթակառուցանքներուն վերաբերող խնդիրները պիտի լուծուին սահմանային համաձայնութիւններուն միջոցաւ:

### ԵՐԵՎԱՆ ԵՐԿԸՆՏՐԱՆԻ ԱՈՋԵՒ

Ռուսիոյ փոխվարչապետ Ալեքսէյ Օւրչուք Երեւանին կոչ ուղղեց հնարաւորինս արագ կողմնորոշուելու Եւրոմիութեան ու Եւրասիական տնտեսական միութեան միջեւ ընտրութեան հարցով: Անոր համաձայն, ոչ ոք Հայաստանը դուրս կը մղէ ԵԱՏՄ-էն, սակայն Երեւանն է, որ կ'ուզէ անդամակցիլ Եւրոմիութեան, ուստի պետք է կողմնորոշուի: «Ռուսիոյ Ռուսիոյ դաշնակից, Հայաստան կ'օգտուի ուժանիւթային միջոցներու յատուկ գիներէ եւ այսպիսի հարցեր պետք է քաղաքակիրթ ձեւով լուծել, եթէ Հայաստան որոշէ դուրս գալ ԵԱՏՄ-էն», ըսաւ ռուս փոխվարչապետը:



## «ԱՐԱՐԱՏ»-Ի ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍԻՏՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Օգտուելով հիւրաբար Սիտնի գտնուելու պատեհ առիթէն, որպէս «Արարատ» թերթի տնօրէն-խմբագիր, մեր առաջին փափկավարական այցելութիւնը կատարեցինք Սիտնիի Զեթապոլտ շրջանին մէջ գտնուող Հայ Առաքելական Եկեղեցոյ Առաջնորդարան, ուր ջերմ ընդունելութեան արժանացանք Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմի Առաջնորդ՝ գերաշնորհ Տեր Վարդան Եպս. Նաւասարդեանի կողմէ:

Մեզի կ'ընկերակցէին Աւստրալիոյ Ս.Գ.Հ.Կ. Վարչի մարմինի ատենապետ ընկեր Սեպուհ Գալիպեանը եւ փոխատենապետ ընկեր Ասատուր Հաճեանը:



Գերաշնորհ Սրբազան Հայրը սիրուած եւ յարգուած հոգեւոր առաջնորդ մըն է Աւստրալիոյ համայնքին մէջ, ինչ որ բազմաթիւ բարեկամներու եւ հաւատացեալներու վկայութեամբ եւս կը հաստատուի: Յատկանշական է, որ ան 2005-2008 տարիներուն ծառայած է որպէս առաջնորդական փոխանորդ եւ առաջին իսկ օրէն շահած է իր հօտին սերն ու վստահութիւնը:

Հանդիպման ընթացքին խօսեցանք թէ՛ Աւստրալիոյ համայնքը եւ թէ՛ լիբանանահայութիւնը յուզող զանազան հարցերու շուրջ: Այս առիթով նաեւ փոխանցեցինք «Արարատ»-ի խմբագրութեան եւ ընտանիքին ողջուններն ու բարեմաղթութիւնները Սրբազան Հօր եւ իր միջոցաւ՝ ամբողջ համայնքին:


Մեր գրոյցէն յստակ տպաւորութիւն կազմեցինք, որ երիտասարդ Սրբազան Հայրը մեծ նուիրումով, անխնշ աշխատանքով եւ անկեղծ հոգածութեամբ կը ծառայէ իր համայնքին: Ան յատուկ նախանձախնդրութեամբ կը ջանայ ամրապնդել գաղութին համախոհութիւնն ու միասնական ոգին՝ իր ամբողջ եռանդը ի սպաս դնելով ազգային ու հոգեւոր կեանքի հզօրացման:

Հանդիպման ներկայ էր նաեւ Սիտնիի Ս. Յարութիւն Եկեղեցոյ հոգեւոր հովի Տեր Աւետիս քնյ. Համբարձումեանը:

## ԶԱՅՆԵՐ ՓԱՐԻԶԷՆ

### (արձագանգ ֆրանսահայ կեանքի) - 2

ԱՆՔՆԻ քաղաքը (փարիզեան արուարձան), 18 Ապրիլին, հայաշունչ օր մը ապրած է երկու տարբեր ձեռնարկներով: Այդ օր, նախ, Մեծ Եղեռնի 111-րդ տարեկիցին առիթով ոգեկոչման ձեռնարկ մը կայացած է Հայոց ցեղասպանութեան զոհերուն ձօնուած «Հայաստանի արծի» յուշակոթողին առջեւ: Ներկայ եղած են մեծաթիւ ֆրանսացիներ ու ֆրանսահայեր: Արարողութեան ընթացքին խօսք արած են Ֆրանսայի ուժանիւթի նախարարը՝ Մոտ Պրեժն (որ նաեւ կառավարութեան բանբերն է), Հո-տը-ՄԷՆ Նահանգի խորհուրդի նախագահ Ժորժ Սիֆրետի, Անթոնի քաղաքապետ Օտ Նոտե-Լանկանը, փոխքաղաքապետ Վիսամ Նեհմէ եւ Հայաստանի դեսպան Արման Խաչատրեան: Նոյն օրը հանդիսարարապէս բացուեց կատարուած է «Դաւթաշէն» անունը կրող փողոցի մը, ի ներկայութեան Հայաստանի ժամանած Դաւթաշէնի վարչական շրջանի ղեկավար Ալբերտ Յովսէփեանի: Հոս եւս խօսք արած են ֆրանսացի ու հայ պատասխանատուներ: Հայկական այս անուանակոչութիւնը կատարուած է ի հետեւումս Երեւանի Դաւթաշէն շրջանին ու Անթոնիի միջեւ 2015-ին ստորագրուած զուգորդութեան (քոյր-քաղաք) արձանագրութեան:



Շարունակութիւնը տեսնել էջ 2

# ՄԻՏՔ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

## Մտաւորականի ճակատագիրը պատմութեան հոլովոյթներուն մէջ

Մարդկութեան պատմութեան ընթացքին իշխանութեան եւ ազատ միտքի, նոյնն է թէ ազատ միտքը կրողի՝ մտաւորականի, յարաբերութիւնը մեծ մասամբ եղած է պրկուած, յաճախ նաեւ՝ ողբերգական: Այն հասարակութիւնները, որոնք պաշտպանած են միտքը, ստեղծած են քաղաքակրթութիւն: Իսկ այն իշխանութիւնները, որոնք վախցած են նոր միտքէն, ունեցած են մշակութային եւ մարդկային ծանր կորուստներ:

Մտաւորականը որեւէ ազգի ոչ միայն կրթելու անդամը, այլեւ այն մարդն է, ով կը ձեւաւորէ մտածողութեան ուղղութիւնը, հարցականի տակ կը դնէ ընդունուած պատկերացումները եւ դուռ կը բանայ նոր կարելիութիւններու առջեւ:

Այդ իմաստով ան ոչ միայն ստեղծող է, այլեւ գիտակցութեան առաջնորդ: Եւ ճիշդ հոս է, որ յառաջ կու գայ հիմնական հակասութիւնը. մտածող մարդը բարոյ է վերահսկել:

Պատմութիւնը բազմիցս ապացուցած է, որ տարբեր ժամանակներու իշխանութիւններ տարբեր պատճառներով, բայց յաճախ նոյն վախէն դրոյւած, փորձած են սահմանափակել ազատ միտքը:

Այդ հակասութեան առաջին զոհերէն է Սոկրատ: Ան ոչ ապստամբութիւն կը քարոզէր, ոչ քաղաքական շարժման առաջնորդ էր, ոչ ալ բացայայտ կը պայքարէր իշխանութեան դէմ: Անոր «զենքը» իր խորաթափանց միտքն էր, եւ այդ միտքն ալ գայն դարձուց գոհ:

Զ.Ա. 399 թուականին Աթէնք իր հարազատ զաւակը դատաւարտեց մահուան՝ մեղադրելով երիտասարդութիւնը «ապականելու», քաղաքի աստուածներուն չեղարկուած պատկերները կասկածի տակ դնելու համար:



Միջնադարու իրականութեան մէջ ան մարդիկը կը մղէր ինքնուրոյն մտածողութեան: Անոր մահը ցոյց տուաւ պարզ, բայց անվիճելի ճշմարտութիւն մը. երբ հասարակութիւնը չի յաջողիր ընդդիմանալ խնդիրներուն, կը հակազդէ պատժելով:

Միջնադարու միտքի եւ իշխանութեան հակադրութիւնը տեղափոխուեցաւ կրօնական դաշտ: Իւրաքանչիւր գաղափար, որ դուրս էր պաշտօնական վարդապետութենէն (dogma), կ'ընկալուէր որպէս սպառնալիք:

Թէեւ բնոյթով տարբեր, սակայն յիշատակութեան արժանի է նաեւ թուրքական շարժումը: Շարժման առաջնորդներն ու հետեւորդները կը մերժէին եկեղեցական նորիպատկութեան կարգ մը ձեւեր եւ կը հակադրուէին կրօնական հաստատուած կառուցուածքին: Յետեւաբար, շարժումը ենթարկուեցաւ դաժանագոյն ճնշումներու, իսկ անոր առաջնորդները՝ մահուան:



Վառ օրինակ է նաեւ անարդարութեան մոլի հակառակորդ Եան Յուսէ: Չեփ բարեփոխիչը պապականութեան ընդդիմախօս էր. ան եկեղեցին կ'ամբաստանէր զանձամոլութեան եւ զանձագողութեան մէջ, միաժամանակ անհրաժեշտ գտնելով, որ քարոզները ինչքան ոչ թէ լատիներէն, այլ ազգային լեզուներով:

1410 թուականին Յուսէ քարոզ կը կարողար կաթոլիկ եկեղեցույ մէջ, մինչ Փրահայի եպիսկոպոսը կը հրամայէր այրել «հերետիկոսին» գիրքերը: Երկու տարի ետք գայն վտարեցին եկեղեցիէն, իսկ 1415-ին ողջ-ողջ այրեցին այդ օրերու կրօնական կեդրոններէն՝ Կոնստանցի մէջ:

Յուսի ողբերգական մահէն դուր մը ետք՝ 1520 թուականին, Մարթին Լիւթեր պիտի ըսէր. «Մենք բոլորս, ակամայ, հուսականներ ենք»:

Լիւթեր նոյնպէս կ'ամբաստանուէր Եան Յուսի գաղափարներուն նմանող «հերետիկոսական» հայեացքներ ունենալուն համար: Վերջ յիշուած խօսքերը ան արտաբերեց այն համոզումով, որ իր աստուածաբանական հայեացքները եպիսկոպոս չէին տարբերէր պոպոնացի բարեփոխիչին գաղափարներէն:

Ճորտան Պրուսո, ով կը խօսէր տիեզերքի անսահմանութեան մասին, արժանացաւ նոյն ճակատագրին: Անոր գաղափարները շատ առաջ էին իր ժամանակէն, իսկ ժամանակը պատրաստ չէր զանոնք ընդունելու:

Այս օրինակները կը վկայեն, որ յաճախ վտանգաւորը ոչ թէ սխալ գաղափարներն են, այլ այն գաղափարները, որոնք ունակ են փոխելու մարդոց աշխարհընկալումը:

Յայ ժողովուրդի պատմութեան մէջ այս նոյն օրինաչափութեան կը հանդիպինք իրարմէ ոչ այնքան հեռու երկու տարբեր ժամանակաշրջաններու՝ օսմանեան բռնութիւններու եւ խորհրդային բռնաճնշումներու տարիներուն:

Յայոց ցեղասպանութեան ընթացքին, մեր ժողովուրդը տառաջօրէն գլխատուեցաւ, դառնալով ոչ միայն ֆիզիքական, այլեւ մշակութային բնաջնջումի անսխալագոյն օրինակ:

Յայ մտաւորականութեան վերացումը կապուած էր ոչ միայն քաղաքական իրավիճակի, այլ յատկապէս մշակութային ինքնութեան հետ. մտաւորականը կ'ընկալուէր որպէս կրող ժողովուրդի իշխողութեան:

Գրեթէ նոյնը կրկնուեցաւ խորհրդային շրջանին: Բազմաթիւ մտաւորականներու ճակատագրեր եկան ապացուցելու, որ գաղափարական վերահսկողութիւնը նոյնքան վտանգաւոր է, որքան բացայայտ բռնութիւնը: Այստեղ վտանգ

### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (Երեւան)

գաւորը ոչ թէ ազգային ինքնութիւնը, այլ անկախ մտածողութիւնն էր:

Այս բոլոր փաստերը եւ օրինակները, որքան ալ ժամանակային ու պատմական առումով տարբեր, ունին մէկ ընդհանուր հիմք՝ յառաջադէմ միտքէն վախը:

Իշխանութիւններու համար, անկախ իրենց ձեւէ՛ն կրօնական, քաղաքական, թէ գաղափարական, ամենէն կարեւորը իրենց կայունութեան պահպանումն է: Մինչդէռ միտքը այն ուժն է, որ կը սպառնայ այդ կայունութեան: Արթուն միտքը հարցեր կ'առաջադրէ, նոր հեռանկարներ կը բանայ եւ կը ստիպէ վերանայիլ հաստատուած «ճշմարտութիւնները»:

Ահա թէ ինչու մտաւորականը յաճախ կը դիտարկուի ոչ թէ որպէս անհատ, այլ որպէս համակարգի դէմ վտանգ: Իսկ երբ համակարգը չի յաջողիր կամ չ'ուզէր արձագանգել նոր գաղափարին, ամեն ինչ կ'ընէ լռեցնելու համար գաղափար կրողը:

Պատմութիւնը մեզի ցոյց կու տայ պարզ, բայց խօսուն ճշմարտութիւն մը. այն հասարակութիւնները, որոնք փորձած են լռեցնել միտքը, կորսնցուցած են ոչ միայն իրենց մտաւորականները, այլեւ իրենց ապագայ զարգացման կարելիութիւնները:

Մտաւորականը ազգի մը ուղեղն է, անոր միտքն ու ինքնագիտակցութիւնը: Մտաւորականը ոչնչացնելով կը փորձեն կոտորել ոչ միայն մարդը, այլեւ տունի ազգին մտածելու կարողութիւնը:

### Շարունակութիւնը տեսնել էջ 4

## ԻՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՍՏԱՉԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՎԱՍԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

Շարունակուած էջ 1-էն

յայտնեց, թէ Զորմուզի ներուցին վերաբերեալ համաձայնելու հնարաւորութիւնը 50 առ հարիւր է: Ամերիկեան զինուած ուժերու կեդրոնական հրամանատարութիւնը յայտարարեց, թէ Իրանի դէմ կատարուած ծովային պաշարումին սկիզբէն ի վեր ամերիկեան ռազմաւաճակը փոխած են Իրան ուղղուող 97 նաւու ուղեգիծերը եւ խափանած են չորս նաւու ընթացքը:

### 72 ՀԱՉԱՐ ՄԱՐ

Կազայի մէջ գործող Զամասի կառավարութեան Առողջապահութեան նախարարութիւնը հաղորդեց, թէ Իսրայէլի կողմէ 7 Յոկտեմբեր 2023-էն ի վեր իրականացուող գործողութիւններուն հետեւանքով մահացած մարդոց թիւը բարձրացած է ամուսնու 72 հազարի, իսկ 173 հազար մարդ ալ վիրաւորուած է: Միայն անցեալ Յոկտեմբերին զինադադարի հաստատումէն ետք Իսրայէլ սպանած է 883 մարդ:



դրութիւններուն հետեւանքով մահացած մարդոց թիւը բարձրացած է ամուսնու 72 հազարի, իսկ 173 հազար մարդ ալ վիրաւորուած է: Միայն անցեալ Յոկտեմբերին զինադադարի հաստատումէն ետք Իսրայէլ սպանած է 883 մարդ:

## ՉԱՅՆԵՐ ՓԱՐԻԶԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

**ՓԱՐԻԶԻ** մէջ, զանազան ձեռնարկներով, նշուած է Մեծ Եղեռնի 111-րդ տարելիցը: Նոթը-Տամ տաճարին մէջ, 25 Ապրիլի մատուցուած է հայաձեւ պատարագ, ձեռնամբ Կաթողիկէ հայոց առաջնորդ Եղիա եպս. Եղիայեանի: Զարուած է Փոնթուազի (Փարիզի հիւսիսային արուարձան) եպիսկոպոսը՝ Պընուա Պերթրաւս: Նոյն օրը, մայրաքաղաքի Յաթթանակի կամարին տակ տեղի ունեցած է անմար բոցի արժարծում եւ ծաղկեմատոյց, նախաձեռնութեամբ Ֆրանսահայ նախկին ռազմիկներու եւ դիմադրականներու միութեան: Նախորդ օրը, մայրաքաղաքի «Յայաստան» հրապարակին վրայ, ուր կը գտնուի Կոմիտասի ծանօթ արձանը, տեղի ունեցած է ռզեկչական ձեռնարկ, որ սակայն ամբողջութեամբ վերածուած է Պաքուի մէջ բանտարկուած 19 հայ պատանդներու ազատագրման գորակրչի... (թշնամին որքան կ'ուրախանայ՝ երբ կը տեսնէ որ կամովին փոխած ենք ցեղասպանութեան մայր օրակարգը...): Ներկայ եղած են Ֆրանսացի պետական բարձրաստիճան դէմքեր: Ելոյթ ունեցողները՝ Փարիզի քաղաքապետ Էմմանուէլ Կրեկուար, ներքին նախարարի կցորդ Ժան-Տիտիէ Պերժէ, հայկական ճակատէն՝ Արա Թորանեան եւ Մուրատ Փափագեան (CCAF-ի համանախագահներ), ցեղասպանութեան յիշատակը անխափելիօրէն կապած են հայութեան եւ Յայաստանի դիմաց ցցուած այժմու մարտահրաւերներուն:



Այնուհետեւ, բազմութիւնը բողոքի ելք մը կատարած է դէպի Շան Գ'էլիզէթ թրքական դեսպանատունը, վանկարկելով հակաթուրք կարգախօսները: Նոյն օրը, Փարիզի քաղաքապետարանը նախորդ տարիներու ամանդութիւնը յարգելով՝ յատուկ ընդունելութիւն մը սարքած է քաղաքապետարանի շէնքին մէջ, հարիւրաւոր Ֆրանսացի թէ հայ հրաւիրեալներու մասնակցութեամբ: Յուս, հանդես եկած են քաղաքապետը, Յայաստանի դեսպանը, հայ համայնքէն ներկայացուցիչներ: Միաժամանակ, նախագահ Մաքրոն X-ի իր հաշիւին վրայ քանի մը տողով յիշատակած է Յայոց ցեղասպանութիւնը:

**ՄԱՐՄԵՅՆ** հայոց Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցու բակին մէջ գտնուող Եղեռնի յուշակոթողին առջեւ, Ապրիլ 24-ին, տեղի ունեցած է ռզեկչական ձեռնարկ մը, ի ներկայութեան Ֆրանսայի վարչապետ Սեպասթիէն Լըքոռնիուի եւ բազմաթիւ պետական-քաղաքական դէմքերու: Ուղեբնեցողը՝ Ելոյթ ունեցած են վարչապետը, Մարսելի քաղաքապետը՝ Պընուա Փայան, Պուշ-Տիւ-Ռոն շրջանի ղեկավարը՝ Մարթին Վասալ եւ Յայաստանի հիւպատոս Արա Մկրտչեան: Յիշեցնենք, որ մօտաւորապէս յիսուն տարի առաջ, երբ Մարսելի մէջ բացումը կը կատարուէր վերոնշեալ յուշարձանին, Թուրքիա ստեղծած էր քաղաքական մեծ փորձերի մը եւ իբրեւ բողոք՝ տուն կանչած էր Փարիզի իր դեսպանը...:

**ՄԱՐՄԵՅՆ** քաղաքի (Փարիզի մերձ) «Եսփաս Վիլար» սրահին մէջ, 21 Ապրիլին, Մեծ Եղեռնի 111-րդ տարելիցի շրջագիծէն ներս, տեղի ունեցած է Ալեքսանտրա Ռուֆիօ-Միքայէլեանի «Երակներուն մէջ հոսող յիշողութիւնը» (La memoire dans les veines) ֆրանսերէն վաւերագրական ֆիլմին ցուցարարութիւնը: Ֆիլմը կը պատմէ այն հայերուն մասին, որոնք 1915-ի աղէտէն ետք մնացին Թուրքիոյ մէջ ու քողարկուած ձեւով պահեցին իրենց ինքնութիւնը...: Բեմադրողը ցնցիչ օրինակ մը տուած է իր ընտանիքէն: Արեւորուած է Պոլիս եւ երկար որոնումներ ետք յաջողած է գտնել իր մեծ հօր «թրքացած» շառաւիղները...: Ֆիլմը 22 Ապրիլին հեռարձակուած է Ֆրանսական KTO կայանէն:



Սորպոնի Ռիշլիէտ յարանոցը, Ապրիլ 22-ին:



Դեպքաւատան բացումը:



**ՓԱՐԻԶԻ** 16-րդ թաղամասին մէջ, 28 Ապրիլին, պաշտօնապէս բացումը կատարուած է Յայաստանի նոր դեսպանատան, ի ներկայութեան Ֆրանսայի ու Յայաստանի արտաքին նախարարներուն՝ ժան-Լուի Պառոյի եւ Արարատ Միրզոյեանի: Նոր շէնքը գնուած ու կառուարուած է Յայաստանի կառավարութեան սեփական միջոցներով: Բացման արարողութեան հետեւած են քաղաքական ու համայնքային բազմաթիւ դէմքեր, հրաւիրելով: Նախարար Միրզոյեանի ձեռնամբ եռագոյն դրօշը պարգուած է շէնքին ճակատին: Նուագուած են գոյգ երկիրներու փառերգերը: Նախարարներէն գատ, Ելոյթ ունեցած է դեսպան Արման Խաչատրեանն ալ: Բոլոր ելոյթները կեդրոնացած են երկու ժողովուրդներու պատմական բարեկամութեան եւ պետական ամուր կապերուն վրայ: Ծիրանէնի մը տնկուած է շէնքին պարտեզին մէջ, որպէս կապերու արմատաւորման խորհրդանշիչ: Աւարտին, սարքուած է ճոխ ընդունելութիւն մը: «Նոր Յառաջ» այս անչափարար կը յայտնէ, որ դեսպանատան նոր կեցարկայրը անցեալին առանձնատունը հանդիսացեր էր Ֆրանսայի նախկին նախագահներէն (1974-1981) Վալերի ժիքար տ'Եսթէի: Յայաստանի Զանապետութիւնը շէնքը գնեց 23 միլիոն եւրոյի: Միւս կողմէ, թերթը նկատել կու տայ որ այս ուրախաշնորհ իրադարձութիւնը եւս պառակտում ստեղծած է հայ գաղութին մէջ, որովհետեւ բացման արարողութեան չեն հրաւիրուած CCAF-ի համանախագահները, Ֆրանսահայոց թեմակալ առաջնորդը եւ Արցախի մայրուն ներկայացուցիչը: Այս իսկ պատճառով՝ CCAF (որ Ֆրանսահայ կազմակերպութիւններու համակարգող խորհուրդն է) հաղորդագրութեամբ մը իր ընդվզումն ու յուսախաբութիւնը յայտնած է այս անտեսումին համար եւ դատաւարտած Յայաստանի կառավարութեան ու անոր դեսպանատան ցուցաբերած խտրական ոգին: Իսկ «Նոր Յառաջ», դիրք գրաւելով վերոնշեալ հաղորդագրութեան դէմ, 30 Ապրիլի իր խմբագրականին մէջ յիշեցուցած է Յայաստանի վարչապետին նկատմամբ կարծոր ու վարկաբեկիչ դիրք բռնած կողմերուն անցեալի յարձակողական ելոյթները, նաեւ նկատել տուած՝ որ գաղութային մարմինները պարտին գո'նէ «դրական չեզոքութեան դիրքորոշում մը որդեգրել՝ յարգելով ժողովրդավարական ընտրութիւններով երկրի իշխանութեան գլուխ անցած պետական գործիչներու կառավարական որոշումները»:

«ՄԱՍԻՍ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ՈՒԺԵՐՈՒ ԴԱՍԱԿՈՐՈՒՄԸ ԸՆՏՐԱՐՇԱԿԻ ԿԵՍ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայաստանի նորագոյն պատմության ամենն հետաքննա- քային ընտրություններն քարոզարշավը կը մտնենայ իր վերջնական փուլին, որուն արարտին պիտի վճռուի երկրի ապագան՝ յաջորդ տասնամեակներուն համար: Պայքարը ոչ միայն կուսակցություններու միջե է, այլ՝ երկու տարբեր աշխարհաքաղաքական հայեացքներու: Մէկը կ'ուզէ վերադարձ նախկին քրեաօլիգարխիկ համակարգին ու Հայաստանի ճակատագիրը կապել «հիւսիսի դաշնակիցին», իսկ միւսը՝ բացուիլ Արեւմուտքին ու ընթանալ բարեկեցութեան ու ժողովրդավարութեան ճանապարհով:

Քարոզարշավի ընթացքին պարզուող ուրուագծին վրայ հիմնուելով կարելի է ըսել, որ վարչապետ Փաշինեանի գլխաւորած ուժը առաջ է միւս կուսակցություններէն եւ իշխանութեան վրայ մնալու անոր հաւանականութիւնը՝ բաւականին մեծ: Այդ ցոյց կու տան գետնի վրայ պարզուող երեւոյթները, հանրահաւաքներուն մասնակիցներու թիւն ու խանդավառութիւնը, ասոնց վրայ գումարած հանրային կարծիքի հարցումները, որոնք բոլորն ալ առաւելութիւնը կու տան «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան: Տակաւին հարցական կը մնայ անոր ապահովելիք տոկոսները, որոնք յայտնի պիտի դառնան միայն Յունիս 7-ի ընտրություններու արարտին:

Իշխող կուսակցութեան հիմնական թեզերը կը մնան խաղաղութիւնը, ժողովրդի տնտեսական վիճակի բարելաւումը, ընդհանուր ապահովագրութեան համակարգի գործարկումը, դպրոցներու, մանկապարտէզներու եւ ճանապարհներու կառուցումը կամ վերանորոգումը, կենսաթոշակներու բարձրացումը, ժողովրդավարութիւնն ու ազատութիւնները:

Ընտրություններուն մասնակցող երկրորդ մեծագոյն ուժը կը հանդիսանայ Ռուսաստանի քաղաքացի ու տնային կալանքի տակ գտնուող միլիոնատեր՝ Սամուէլ Կարապետեանի ստեղծած «Ուժեղ Հայաստան» կուսակցութիւնը: Կը կարծուի թէ այս ուժը պիտի կարենայ իսկական մրցակից դառնալ իշխող ուժին, շնորհիւ անոր տրամադրութեան տակ եղող նիւթական հսկայ միջոցներուն եւ Ռուսաստանի կողմէ անոր վայելած աջակցութեան: Սակայն ընտրապայքարի ընթացքին ի յայտ կու գան շարք մը երեւոյթներ, որոնք կը վնասեն այդ ուժի վարկանիշին: Սամուէլ Կարապետեան երբ

սկսաւ հրապարակային ելոյթներ ունենալ առանց արհեստական բանականութեան օգնութեան ու մտնէ շփուիլ լրագրողներու հետ, ի յայտ եկաւ, որ ան դժուարութիւններ ունի հայերէնով արտայայտելու եւ իր միտքերը յստակ բանաձեւելու: Նաեւ պարզ դարձաւ, որ «Ուժեղ Հայաստան»-ը մեծապէս կ'ապաւինի նիւթականով շահագրգռելու եւ ընտրակաշառքի օգտագործմամբ ժողովրդականութիւն վայելող կուսակցութեան խաբկանք ստեղծելու վրայ:

Այս ուժը ժողովուրդին կը խոստանայ տնտեսական զարգացում, 300 հազար նոր աշխատատեղեր, Ռուսաստանի հետ կապերու բարելաւում, երկրի պաշտպանութեան ամրապնդում: Ան կը մեղադրէ իշխանութիւնները, որ իբրեւ թէ կը պատրաստուին Հայաստան բերելու 300 հազար ատրպէյնացիներ:

Իշխանութեան ձգտող երրորդ ուժը կը հանդիսանայ Ռուսաստանի Զոհարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը, որուն վարկանիշը օրըստօրէ կը նուազի: Այս ուժի նախկին կողմնակիցներէն ու քուէարկողներէն շատեր արդէն իսկ անցած են Սամուէլ Կարապետեանի կողմը, իսկ ինքը՝ Զոհարեանը խնդիրներ ունի իր անցելիս հետ, երբ անոր իշխանութեան օրօք տեղի ունեցան քաղաքական սպանություններ, փակուեցան անկախ կրատումիջոցներ, կաշառակերութիւնն ու փտածութիւնը ստացան համակարգային բնոյթ ու երկրէն ներս տիրեց վախի մթնոլորտ: Զոհարեանի քարոզարշաւի հիմնական թեզը կ'ամփոփուի Փաշինեանը «թուրք, հողատու, դաւաճան» անուանելու մէջ, որ այլեւս աշխատող կարգախօս չէ հայ ընտրողին մօտ:

Ներկայիս դրութեամբ, «Հայաստան» դաշինքի խորհրդարան մուտքը խիստ կասկածելի է, նկատի առնելով, որ դաշինքներու պարագային հոն հասնելու համար պէտք է ապահովել ընտրողներու առնուազն 8 տոկոսի ձայները: Ընտրություններու արարտին Հայաստանի ժողովուրդը կրնայ ականատես դառնալ Զոհարեանի քաղաքական կեանքի մայրամուտին:

Խորհրդարան մուտք գործելու յաւակնութիւն ունի նաեւ մեծահարուստ Գագիկ Ծառուկեանի գլխաւորած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Կը կարծուի, թէ 4 տոկոսի նուազագոյն շեմը յաղթահարելու եւ խորհրդարան մտնելու հաւանականութիւնը աւելի մեծ է այս ուժին համար:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՏ)

Կարապետեան-Զոհարեան-Ծառուկեան կը ներկայացնեն ռուսամետ ճակատը, որ պիտի փորձէ Փաշինեանը հեռացնել իշխանութենէն՝ ընտրություններէն ետք միանալով ու մեծամասնութիւն կազմելով: Իրենց նպատակին հասնելու համար այդ երեք ուժերն ալ բաւական մեծ տոկոսներով պէտք է ներկայացուած ըլլան նոր խորհրդարանէն ներս: Այսօրուան դրութեամբ այդ հաւանականութիւնը շատ ցած է:

Վերջապէս, ներքաղաքական կեանքին մօտէն հետեւողներու ուշադրութենէն չի վրիպիր այն պարագան, որ ընտրարշաւի ջերմաստիճանը սպասուածէն աւելի բարձր է, ինչ որ ժխտական տպաւորութիւն կը ձգէ հասարակութեան մօտ: Երկուստեք կը ինչէն իրար հասցէին վիրաւորանքներ, ցեխարձակումներ ու սպառնալիքներ՝ վանելով շատ քաղաքացիներ, որոնք պիտի չուզէին մասնակից դառնալ նման ժխտական գործընթացներու:

Կը յուսանք, որ այս ընտրությունները կ'անցնին առանց ցնցումներու եւ արարտին քաղաքական դաշտը կը վերանորոգուի ու կը դառնայ աւելի ամողջ ու հաւասարակշռուած՝ հեռու պառակտում սերմանող հռետորաբանություններէ ու երեւոյթներէ:

ԽԱԶԲԱՌ-82

10x10 grid for crossword puzzle 82 with some cells filled with numbers.

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- 1) Հայկական ամիսներու ժէ. օրը - Գեղջական կօշիկ:
2) Տարիք - Սպասէ:
3) Իգական ոտար անուն - Ծռիլ, թեքիլ:
4) Սիւսանթոյի ծննդավայրը - Տուցական ածական - Հասկցիր:
5) Առական օտար անուն - Գրուած տարածութիւն:
6) Հովիւ - Տնկելի ծիւղ:
7) Հաստատական - Անկիզբ՝ հարիւր տարի - ճոկան:
8) Մեղմ հով - Լարաւոր նուագարան:
9) Ծանրութեան միաւոր (հակ.) - Եգիպտական դից:
10) Պատմէչ - Անդարձագիր:

ՈՒՂԱԳԱՅԵԱՑ

- 1) Կոհակ - Երկնային լուսաւոր մարմին:
2) Զրոտելու սկսի - Այբուբենէն:
3) Ժամանակ - Ի վերջոյ:
4) Արամբի - Տղայ՝ - Անճնական դերանուն (հակ.):
5) Կիլիկեան քաղաք (հակ.) - Կօշիկէն մաս մը:
6) Կրկնուած բաղաձայններ - Վերջ, լրում:
7) Պատեհ - Հանքային համեմ - Ռումբի տեսակ:
8) Արմատէն բուսած նոր ծիւղ - Ճորտին յանձնուած հողաշերտ:
9) Ստացական ածական - Ռահպանի եղբայրներէն:
10) Սալվատոր Տալիի տիկինը - Արշակ Զօպանեանի հիմնած թերթերէն:

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ-84

Large crossword puzzle grid with numbers in some cells.

ՄՈՆԱԶ ՄՐՈՒՐ

- ՈՐԱԿԱԿԱՆ
ՈՐԱԿԵԱԼ
ՈՐՂԱՆ
ՈՐԴԵԱԿ
ՈՐԵԱՐ
ՈՐԿՈՐ
ՈՐՁԱՏ
ՈՒՌՈՒԼ
ՈՒՐԱԳ
ՈՒՐՈՒ (2)

ՈՎԶՄԱԾԱԿԱՏ ՈՎԶՄՈՒՆԱԿ

ՍԻՐՈՒՆԻԿ ՍԿԻԶԲ

- ՎԱՐԴԵՆԻ
ՎԱՐԺԱՐԱՆ
ՎԵՐՄԱԿ
ՎԵՐՁԻՆ
ՎՍԵՄԱՇՈՒՔ
ՎՐԻՊԱԿ

ՏԱՍՈՒԿ ՏԱՆՁ ՏԼՈՆ (2)

ՕՍԼԱՅԵԼ ՕՏԱՐԱՍՈԼ ՕՐԱՎԱՐ ՕՐԱՅԵՏՐ

ԱԿԵԿԱԼԵԼ
ԱԵՊԱՐԱՐ
ԱՆԻԾ
ԱՊԱՌԻԿ
ԱՐԱՐՔ
ԱԲԱԳ

ԲԱԲԱՆ (2)
ԲԱՂԱՐՁ
ԲԱՐԴ
ԲԵՐՐԻ
ԲՆԻԿ
ԲՈՎՈՏՆ

ԳԱԼԻՔ
ԳԱԲԱՌԱՊԵՏ

ԳԵՐԱՆԴԻ
ԳԵՐԵՐՁԱՆԻԿ
ԳՈՅԱՐ
ԳՈՅԱՐԱԿԱԾԱՐ
ԳՐԱԳԱՐԱՆԱՊԵՏ

ԴԱՍԱՐԱՆ
ԴԱՐՁ
ԴԵՂԱՐԱՐ
ԴԵՆՊԵՏ
ԴՐԱԿԱՆ

ԵՂԵԻՆ
ԵՂԻ
ԵՂԻԾ
ԵՂՆԻԿ

ԵՐԿԱՆ
ԽԱՐՏ
ԽՈՐԱՆ
ԽՊՆԻԼ
ԽՐԱՄԱՏԵԼ

ԿԱՐՈՂ
ԿՂԵՐ
ԿՏՐԱՏ
ԿՐԾՕՆ

ՀԱԼՈՂԻ
ՀԱԿՈՒՄ
ՀԱՄԱՐ
ՀԱԶԻՆ

ՀԱՏՈՒԱԾ
ՀԵՐՁԱՏԱՍ
ՀՆԱՐՔ

ՂԵԿ
ՂՕՂԱՆՁԵԼ

ՃԱՄԲԱՐ
ՃԱՇԱԿԵԼ
ՃԱՐԱԿ

ՄԱԿԱՂԱՏԵՂ
ՄԱԵԿԱԼ
ՄԱՐՄԱՁ
ՄԱՐՏ
ՄԻԱՄՈՐ

ԽԱԶԲԱՌ-ԹԻԻ 81-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

10x10 grid for crossword puzzle 81 with some cells filled with numbers.

Պահուած բառը (7 տառով)՝ ՄԵԾ ՇԻԾ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ-ԹԻԻ 83-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՃԱՀԱՍՏԱՆ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

- Ինքնուրուի կարգաւորուող տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

# ՄԻՏՔ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Շարունակում էք 2-էն

Սակայն նոյն պատմությունը բազմիցս ապացուցած է նաեւ ուրիշ բան մը. միտքը ի սպառ լռեցնել կարելի չէ: Ան կրնայ ճշուրիկ, խեղդիկ, ժամանակաւորապէս մղուի դէպի լուսանցք, բայց վերջնականապէս անհետի՝ բնաւ: Միտքը անսպասելի ձեւերով եւ նոր անուններով վերադարձի թարմ ուղիներ կը գտնէ:

Ասիկա, ըստ երեւոյթին, պատմութեան ամենէն մեծ առեղծուածներէն է. իշխանութիւնները, այո՛ր, կրնան կառավարել մարդը, բայց ղեկավարել անոր միտքը՝ անզօր են:

Մարդուն կարելի չէ արգիլել, որ մտածէ, բայց ասիկա այնքան ատեն, քանի դեռ միտքը չէ վերածուած խօսքի: Իսկ ի՞նչ արժէք կամ իմաստ ունի միտքի ազատութիւնը, եթէ անոր հաղորդակից չեն նաեւ ուրիշներ:

Այսօր քաղաքակիրթ երկիրներու մէջ խօսքի ազատութիւնը այնքան բնական է ընթացիկ դարձած է եւ մարդը այնքան վարժուած է այդ իրողութեան, որ զայն կ'ընկալէ իբրեւ ինքնըստինքեան տրուած եւ անկորնչելի իրաւունք:

Սակայն այդ իրաւունքը ձեռք բերուած է միայն երկարատեւ պայքարներէ եւ արհմատի գոհողութիւններէ ետք:


Դարեր պէտք եղած են, որպէսզի ամենալուսաւոր ժողովուրդներն անգամ համոզուին, թէ սեփական կարծիքը հրապարակելու եւ բոլոր հարցերը ընկարկելու ազատութիւնը ոչ թէ վտանգ, այլ արժէք կը ներկայացնէ:

Փոքր բացառութիւններով, մարդկային հասարակութիւնները ընդհանուր առմամբ կասկածով կը վերաբերին միտքի ազատութեան եւ նոր գաղափարներուն, եւ ինչո՞ւ՝ դժուար չէ հասկնալ:

Կ'ընեն, թէ միջին մակարդակի միտքը ծոյլ է եւ առաւելապէս հակուած է ընտրելու նուազագոյն դիմադրութեան ուղին: Այդպիսի մարդու մտաւոր աշխարհը յաճախ կազմուած է համոզումներ, որոնք ան ընդունած է առանց հարցականի, հետեւաբար բնագոյնական թշնամանքով կը վերաբերի որեւէ նորութեան, որ կը սպառնայ խախտել իր ընկալումները:

Նոր գաղափարը, որ անհամատեղելի է նախկին համոզումներուն հետ, կը ստիպէ վերակազմաւորել մտածողութիւնը: Իսկ այդ գործընթացը աշխատատար է, որովհետեւ նոր գաղափարները կասկածի տակ կը դնեն հինէն ի վեր հաստատուած պատկերացումները եւ շատ անգամ կ'ընկալուին որպէս վտանգաւոր կամ նոյնիսկ՝ «չար»:

Սկզբունքային պատմութիւնը չհարգեցաւ կրկնելէ նոյն ծայրայեղ կեցուածքները:



Իր ժամանակի մեծագոյն մաթեմատիկոսներէն եւ աստղագետներէն՝ Զիփաթիա, յունական մշակութային աշխարհին պատկանող մտածող էր: Ան ապրած է Ալեքսանդրիա, մօտաւորապէս Դ. - Ե. դարերուն, երբ քաղաքը հելլենիստական գիտութեան եւ փիլիսոփայութեան մեծ կեդրոն էր: Ազգութեամբ զայն յոյն կը համարեն (աւելի ստույգ՝ հելլենիստական յունական աստղագետներէն Ներկայացուցիչ), թէւ ապրած է հռոմէական Եգիպտոսի մէջ, հոն ղեկավարելով նոր պղատոնական փիլիսոփայական դպրոցը: Անոր կին ըլլալը շատ աւելի բորբոքեց տգետ եւ մոլեռանդ ամբիջը, որ, ի վերջոյ, դաժանաբար սպաննեց կին գիտնականը:

Շատերու համար Զիփաթիա դարձած է ազատ միտքի ու գիտութեան խորհրդանշանը:


Նոյն ճակատագիրը, տարբեր դարերու ընթացքին եւ տարբեր ձեւերով, բաժին հասաւ նաեւ այլ մտածողներու:

ԺԸ. դարու Ֆրանսայի մէջ, կիներու ազատութեան գաղափարը տարածելու «յանցանքով» գլխատուեցաւ գրող եւ հասարակական բարեփոխիչ Օլիմպի տը Կուս:

Բազմաթիւ են նաեւ վերօրէյի օրինակները: Զանի-քանի՛ այլախոհներ իրենց կեանքով հատուցեցին ազատ միտքը բարձրաձայնելու եւ համախոհներ ունենալու համար:

Դարերով տարբեր քաղաքակրթութիւններու մէջ ձեւաւորուած են նոյն օրինակափոխութիւնը ցուակալով շարունակուած է նաեւ հայ իրակալութեան մէջ:

Հոս եւս մտաւորականը ընկալուած է ոչ միայն որպէս անհատ, այլ որպէս գաղափարի, յիշողութեան եւ ինքնագիտակցութեան կրող:



Փայլուն գրող, ցեղասպանութեան սարսափները վաւերագրած եւ ճշմարտութիւնը գրի առած Չապլէ Եսայեան իտալականացեալ եւ դարձաւ խորհրդային բռնաճշունչներու զոհ... Մեծն Չարնցը, որուն խօսքը կը ձեւաւորէր իր ժամանակի մտածողութիւնը, դաժանօրէն լռեցուցաւ իր իսկ երկրին կողմէ (Յաճախ մեր կամակատարները իրենց դաժանութեամբ գերազանցած են նոյնիսկ անոնց, որոնք ծրագրած ու յանձնարարած են այդ ոճիւրները):

Մեծ է անոնց թիւը: Այդպիսի մարդիկը չեն հանդուրժեր: Ընդհը է, որ անոնց ճակատագրերը տարբեր են իրենց դրսեւորումներով, սակայն արմատը նոյնն է՝ իշխանութիւնները կը սուսկան անոնց չվերահսկուող միտքը:

Համաձայնիք, սակայն, որ պատմութիւնը յառաջ կը մղեն ոչ թէ լռողները, այլ մտածողներն ու խիզախողները...:

Մեծ է անոնց թիւը: Այդպիսի մարդիկը չեն հանդուրժեր: Ընդհը է, որ անոնց ճակատագրերը տարբեր են իրենց դրսեւորումներով, սակայն արմատը նոյնն է՝ իշխանութիւնները կը սուսկան անոնց չվերահսկուող միտքը:

ARARAD DAILY NEWSPAPER
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com
ارارات جريدة يومية عربية
تصدر عن شركة مساهمة للمطبوعات والنشر (ش.م.م.)

# ԸՆԿԵՐ ԻՇԽԱՆ ԽԱՆՃԻՀԱՆՆԵԱՆԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻ

Դժուար է մահուան առիթով կամ դագաղի շուրջ արտասանուած խօսքերով յաջորդող, մանաւանդ երիտասարդ սերունդներուն ծանօթացնել տիպարը իշխան Խանճի-Խանճի: Մահն հաւատաւոր ու նուիրեալ Զ.Մ.Ս.-ականի մը, գաղափարապաշտ ու կարգապահ հնչակեան շրջանի մը, եւ համեստ ու ազնիւ հայորդիին, որուն դիմագիծէն երբեք չպակսեցան ժպիտն ու լաւատեսութիւնը: Լաւատեսութիւն զոյգ հայրենիքներու խաղաղութեան, բարգաւաճման նկատմամբ:

Փոքր տարիքէն ստացած էր կուսակցական ամուր դաստիարակութիւն, իբր ուսուցիչ ունենալով իր ծնողքը, Ս.Դ.Յ.Կ.-եան հաւատաւոր ողբացեալ ընկերներ Մարտիրոս (Խնճոզ) եւ Զայկուհի Խանճի-Խանճիները, անոնք իրենց գաւազններուն համար դարձան գաղափարական եւ մարդկային դաստիարակութեան դպրոց:

Թէ՛ հնչակեան, թէ՛ Զ.Մ.Ս.-եան ընտանիքէն ո՛վ չէր ճանաչար իշխանը, որ սիրալիկ կը բարեւեր բոլորին եւ լաւ գրուցակից էր:

Բազմազան ընտանիքին կրտսերագոյն էր ընկերը: Ծնած էր 1946-ին, Պէյրուս: Փոքր տարիքէն ընդգրկուած էր Զ.Մ.Ս.-ի սկաւտական կազմին մէջ, երկար տարիներ իր աշխույժ մասնակցութիւնը բերած էր Զ.Մ.Ս.-ի փողերախումբին: Այդ օրերուն աշակերտած է Մեծ երաժիշտը Աշոտ Պատմագրեանին, որուն մասին կ'արտայայտուէր մեծ հպարտութեամբ ու կ'աւելցնէր. «Խստապահանջ երաժիշտ-ուսուցչապետին շնորհիւ սորված եմ նօթաները ճիշտ օգտագործելը»:

1960-ականներուն կ'անդամակցի Ս.Դ.Յ.Կ. Տիրուհի Ու. Երիտ. Միութեան: Անցնելով այդ դպրոցէն, իր մէջ կը թօծուի միութեան գաղափարա-հայրենասիրական ոգին: Այստեղ իր մէջ ամրացան «Ազգը, հայրենիքը եւ գաղափարը անսակարկելի արժէքներ են», «հայրենիքը ամեն բանէ վեր է, եւ անշահախնդրօրէն պէտք է պաշտպանել զայն» սկզբունքները: Եւ մինչեւ իր մահը ան հաւատարիմ մնայ վերոյիշեալ արժէքներուն:

1976-ին կը բերէ իր մասնակցութիւնը Տիրուհի Ու. Երիտ. Միութեան կուսակցական նորաստեղծ նուագախումբին: Ակումբէն ներս կը ձայնագրուի կուսակցական առաջին ձայնագրող (շնորհիւ օրուան վարչական ընկերներու շանքերուն) ստեղծելով մեծ խանդավառութիւն, ընկ. Յարութիւն Տեր Դակիթեանի (կատարողութեամբ) երգեցողութեամբ:

1980-ին կ'անդամակցի Ն.Ս.Ս.Ս.-ին: 1983-ին զինք կը տեսնենք Ն.Ս.Ս.Ս.-ի երգի-պարի համոյթին մէջ, իբրեւ երգչախումբի անդամ:

1982-ին կ'ամուսնանայ Շաքէ Փաշայեանի հետ եւ կը կազմէ ընտանեկան գողտրիկ բոյն մը: Չոյզը կ'ունենայ երկու զաւակ՝ Զայկուհի եւ Յովսէփ Խանճի-Խանճիներ, որոնք որեւց ծնողքին կը պարգևեն երեք թոռներ՝ Մաթեօս, Մելանի եւ Միլան: Անոնք մեծ հայրիկին եւ մեծ մայրիկին գուրգուրանքին կեդրոնը դարձան:

Ամուսնանալի ընկեր, Դառն իրողութիւն է, որ չկաս ու պիտի չայցելէս ամենօրեայ սիրած ժամագրավայրդ՝ թաղին անկիւնը: Ամեն օր ժամը 4-5-ի միջեւ կ'իջնէր, կոկիկ հագուած, գլխարկը վիշուր, կը դիտէր շուրջը, կը բարեւէր ու կը գրուցէր,

կ'ուրախանայր...: Կը պատահէր հակառակը, յաճախ չէր ճանչնար գրուցակիցը, որն, ջեզի հարց կու տայիր.- ո՛վ է, ջեզիցայ: Երբ զիս տեսնէր տխուր կ'ըսէր.- եթէ մէկը երկար ժամանակ չտեսնես, կը մոռնաս կոր, այդպէս չէ: Ժպիտով կ'աւելցնէ.- Ընդհը ես, ընկեր իշխան, այդպէս է: Այս խօսքերուս վրայ կը ժպտէր բարի ժպիտով մը, ու միասնաբար կը բարձրանայինք տուն տունը ըմպելու:



Քառասնօրեակը է, ընկեր իշխան, Դեռ թարմ են բոլորիս ու մեր հոգիներուն մէջ կ'արձագանգէ Զ.Մ.Ս.-ի փողերախումբին հնչեցուցած Շուփէի «Մահերգ»ը, երբ դագաղը դանդաղ քայլերով ուսամբարձ դուրս կու գար եկեղեցու գալիքին:

Դեռ մեր յիշողութեան պաստառին վրայ է Յնչակեան կարմիր դրօշով պարուրուած դագաղը...

Դեռ մեր յիշողութեան մէջ է կուսակցական շուրջով կատարուած թաղման արարողութիւնը, յուղարկաւորներու թափօրը, սգակիր բազմութիւնը, տիրուհիական ընկերներ, փոխնիփոխ ուսամբարձ կը տանին դագաղը, իսկ դագաղի կը հետեւին անմխիթար կողակիցը՝ ընկ.հի Շաքէն, զաւակները, հարազատները, ընկերներ ու բարեկամներ: Կուսակցական երգերու նուագներով թափօրը կ'անցնի Նոր Զանոյ թաղերու փողոցներէն, անցնելով տանը, Ս. Գեորգ եկեղեցու, ուղղուելով հալիլ Պատարուի Զ.Մ.Ս. ակումբ, միշտ փողերախումբին ընկերակցութեամբ:

Իսկ դուն բոլորիս սիրելի, բոլորես յարգելի իշխանը, անտարբեր իր շուրջ կատարուող անցած-դարձածին, կը ննջէր խաղաղ, անվրդով յաւիտեական քունով:

Յարգելի ընկ. իշխան, Շուրջ 40 օրեր առաջ էր, երբ անշունչ մարմինը յանձնեցինք ցուրտ հողին, այսօր տխուր իրողութիւն է. արդէն ամենալաւին, ամենաբարիին ձգտող հոգիդ կը ճախրէ եթերին, այլ երկինքներուն մէջ գտա՛ր ծնողքդ, եղբայրներդ՝ Շանթը, Կայծակը, Արմենը, Սոկրատը, Երուանդուհին, Ալիսը, Անահիտը, եւ այսօր դուն այլ միացար այդ հողին, հոն խաղաղութիւն գտնելով: Փոխանցէ իրենց մեր սիրոյ եւ յիշատակներուն մէջ անթառամ մնացող պատկերները իշխանի:

Մահը 40 օրեր ետք, թող կը այս քանի մը տողերը սփոփանք ու մխիթարութիւն բերեն ընկ.հի Շաքէին, զաւակներուդ, հարազատներուդ, աստղալիաբնակ քրոջդ՝ ընկ.հի Վեհանշոյ Խանճի-Խանճի, եւ բոլոր անոնք, որոնք յուզուեցան անդառնալի կրօնատուրդ: Թող որ այ սրտաբաւ խօսքերը ծաղկեփունջ ըլլան եւ զարդարեն ցուրտ շիրիմը: Հողը թեթեւ գայ վրայդ, Ու յիշատակդ այլ մեր մէջ Մնայ անմար կեանք-երգա...:

Սգակիր Ս. ԵՐԿԱՆԵԱՆ

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ընկ.հի Շաքէ Խանճի-Խանճի եւ զաւակուրք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռաձայնային կապով մասնակից դարձան իրենց ամուսնոյն եւ հօր՝ ԸՆԿ. ՉԱՐԵՅ ԻՇԽԱՆ ԽԱՆՃԻՀԱՆՆԵԱՆԻ մահուան սուգին, եւ առ այդ կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները.

«Արարատ» օրաթերթին	50 ամ. տոլար
Ս.Դ.Յ.Կ. «Մարո Նազարբէկեան» մասնաճիւղին	50 ամ. տոլար
Ս.Դ.Յ.Կ. «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղին	50 ամ. տոլար
Ս.Դ.Յ.Կ. Տիրուհի Ու. Երիտ. Միութեան	50 ամ. տոլար
Զ.Մ.Ս. Պէյրուսի փողերախումբին	50 ամ. տոլար

(Նուիրատուութիւնները ստանալ «Արարատ»-ի խմբագրատունէն)

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ողբ. ընկ. ՉԱՐԵՅ ԻՇԽԱՆ ԽԱՆՃԻՀԱՆՆԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Մայիս 2026-ին, Էշրէֆիէի Զայ կաթողիկէ Ս. Աւետման եկեղեցու մէջ (Զայ կաթողիկէ պատրիարքարան, Ժախաւի), առաւօտեան ժամը 10:30-ին, յաւարտ Ս. Պատարագի:



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէն (Medical Health Insurance) մեր դարմանատան միջոցով սերտուած գիներով ինչպէս նաեւ վճարումի դիւրութիւններով:



Յանդիմանումներու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01/560 704 եւ 71/356 035

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՎԵՏՏԵԿՆԻԿԱՆ ԿՐԹԱԿՆԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ
Ներքալանայ Ծառայութեան Միջոցով
Պրոֆ. Քալանթար
Մարմնակրթութեան եւ Երիտասարդութեան Նախարար
Դոկտ. Նորա Պայրազաւարեան

Հ.Կ.Բ.Մ. ԴԱԲՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ
Դարձանատուր բաց է ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ կէսօր, եւ ժամը 3:00-էն սուրճի կիսակի օրակէ:
Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ՛ դեղատեղի բաց էլ նաեւ նոյն ժամերու:
Երկուշաբթի
• Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
• Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
Երեքշաբթի
• Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Ատամնաբոյժ
• Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձախն հիանդութիւններ
• Բժշ. Արթուր Չոլպալ - Ակնաբոյժ
• Կարօ Աւետեան - Ֆիզիքական բուժում
• Բժշ. Մարալ Պողոսեան - Հոգեբան
Զորեքշաբթի
• Բժշ. Յակոբ Տէմիրճեան - Ուկրաբոյժ
• Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
• Մարիլին Աւու - Սննդաբան
Հինգշաբթի
• Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Ատամնաբոյժ
• Կարօ Աւետեան - Ֆիզիքական բուժում
• Բժշ. Իրինա Արքանեան - Ծնողաբերութեան եւ կանանց հիանդութիւններ
• Բժշ. Միսակ Արքանեան - Վիրաբոյժ
• Բժշ. Մարալ Պողոսեան - Հոգեբան
Ուրբաթ
• Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
• Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
• Բժշ. Միսակ Արքանեան - Սրտաբան
Շաբաթ
• Բժշ. Միւրեան Խօնէյար - Քիւ, կոկորդ, ակնայ
• Բժշ. Լի-Թօնի Բօրպանի - Ընդհանուր բժշկութիւն
• Բժշ. Քրիստինա Կարպէտեան - Ատամնաբոյժ
• Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ
@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035